31.03.2020թ. կնքված **ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-93** պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոց նախատեսելու վերաբերյալ

**համաձայնագիր № 1**

ք. Երևան 14 մայիսի 2020թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ.Թագեսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-93» պայմանագրի 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

1. Հաշվի առնելով Վաճառողի գրությունը և նոր կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված արտակարգ իրավիճակը, ինչպես նաև հիմք ընդունելով 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին մարտի 31-ին կնքված № ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-93 պայմանագրով ձեռքբերվող ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2019-93» գնման պայմանագրի անբաժանելի մաս:

3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12 | Հասցե՝ ք.Երևան, Լենինգրադյան 31/7 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ 16047808168200 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ 01232586 |
| Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ | Տնօրեն՝ Հ.Թագեսյան |
| Ա.Վանյան | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |